ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վերապատրաստվող՝ Անահիտ Գալուստյան

Նոր Նորք վարչական շրջանի թիվ 105 մ/մանկապարտեզ

Վերապատրաստող՝ մ.գ.թ. Մարիաննա Ավագյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1. Նախադպրոցական տարիքի երեխաների բնութագիրը և հաղորդակցման առանձնահատկությունները.....5

2. Նախադպրոցական տարիքի երեխաների հաղորդակցման կարողությունների ձևավորումը.....11

3. Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների հաղորդակցական կարողությունների զարգացումը խաղի միջոցով.....15

ԳԼՈՒԽ 2.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ.....19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....23

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը և նշանակությունը: Նախադպրոցական տարիքը համարվում է հոգեկանի ինտենսիվ զարգացման այն շրջանը, երբ շարունակվում է վաղ տարիքում զարգացման համար ձևավորված նախադրյալները: Տեղի են ունենում մի շարք փոփոխություններ՝ կատարելագործվում է խոսքը, զարգանում է հիշողությունը, մտածողությունը, գործունեության տարբեր ձևեր և այլն:

Նախադպրոցական տարիքը երեխաների հոգեկան աշխարհի գրեթե բոլոր կողմերի ինտենսիվ զարգացման շրջան է: Հենց այս տարիքում են տեղի ունենում ճանաչողական հոգեկան գործառույթների ինտենսիվ զարգացումը, զգալիորեն ավելի բովանդակալից է դառնում մտածողությունը, ի հայտ է գալիս վերլուծության ու պատճառահետևանքային կապերի որոնման հակվածություն: Վարքը տարբերվում է քննադատականությամբ, գործողություններիու արարքների տրամաբանականությամբ, կանոնները խախտելու դեպքում մեղքի մեծ զգացմամբ: Տարբերակվում են ճաշակները, հետաքրքրություններն ու հակումները, կատարելագործվում են գեղեցիկի, հրաշալիի, տգեղի, ամոթալիի բարոյա-էթիկական կատեգորիաները: Այս տարիքում սկսում է դրսևորվել երեխաների նախաձեռնողականությունը, որը, ինչպես Է. Էրիքսոնն է նշում, կարևորագույն նշանակություն ունի անձի ստեղծագործական կերտվածքի ձևավորման համար:

Այսպիսով թեմայի ընտրությունը պայմանավորված է մասնագիտական գրականության մեջ նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում հաղորդակցման զարգացման մանկավարժական գործունեության կարևորության ընդգծման համար:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ավագ նախադպրոցական տարիքի երեխայի հաղորդակցման զարգացման առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են.

- Ներկայացնել նախադպրոցականի հաղորդակացման առանձնահատկությունները:
- Ներկայացնել նախադպրոցականների հաղորդակցման զարգացման մանկավարժական գործունեության ձևերը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ **մեթոդները**.

- ✓ գրականության վերլուծություն,
- ✓ գործնական աշխատանք:

Հետազոտության կառուցվածքը. Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, համակարգչային շարվածքով կազմում է 24 էջ:

ԳԼՈՒԽ 1.

1. 1 **Նախադպրոցական տարիքի երեխաների բնութագիրը և հաղորդակցման առանձնահատկությունները**

Նախադպրոցական տարիքը համարվում է մարդկային հարաբերությունների սոցիալական տարածության յուրացման փուլ մոտ հարազատների հետ շփման միջոցով, ինչպես նաև հասակակիցների հետ խաղային և իրական հարաբերությունների միջոցով: Նախադպրոցական տարիքը երեխային բերում է նոր սկզբունքային նվաճումներ[1]: Կրտսեր նախադպրոցականից անցումն ավագին նախապատրաստվում է ֆիզիոլոգիական մակարդակում՝ երկրորդ ազդանշանային համակարգի կարգավորող դերի, երեխայի վարքում խոսքի դերի ուժեղացմամբ: Դա արտահայտվում է ընդհանրացումների, կանոնների, առանձին նպատակների և դրանց պալանավորված նվաճումների հետաքրքրվածությամբ և դիտվում է կյանքի հինգերորդ տարում: Այդ ժամանակ սկսում են դուր գալ կանոներով խաղերը: Սյուժետային խաղերի համար ընտրվում են որոշակի խաղալիքներ՝ պլանավորելով խաղը: Երեխայի մոտ դրսևորվում են գլխավոր նպատակները և որոշակի ցանկությունների ենթարկում, այսինքն՝ մոտիվների հիերարխիան: Զարգանում են կամածին ճանաչողական գործընթացներ: Բոլոր այս նորագոյացությունները կապված են խոսքի հետ և կախված են նրա զարգացումից:

Նախադպրոցական տարիքն այնքան լի է իրադարձություններով և նշանակալից փոփոխություններով երեխայի հոգեկանի մեջ, որ ողջ այդ շրջանը բաժանում են կրտսեր նախադպրոցական տարիքի՝ 3-5 տարեկան և ավագ նախադպրոցականի՝ 5-7 տարեկան: Նախադպրոցական երեխան տիրապետում է քայլքին, խոսքին, նրա շփման շրջանակը ընդլայնվում է, նա ունենում է ընկերներ խաղում, նրա հետ շփվում են հարևանները և նույնիսկ կողմնակի մարդիկ: Արդյունքում երեխայի մոտ ձևավորվում է մեծահասակի կերպարը նրա սոցիալական գործառույթի մեջ:

Նախադպրոցական տարիքում շարունակվում է սեփական մարմնի ակտիվ տիրապետումը՝ գործողությունների և արարքների կոորդիանցումը: Այս շրջանում

[1] Мухина В.С. “Возрастная психология”М., 2006,,էջ 219

շարունակվում է բուռն զարգանալ խոսքը, ակնառու-գործնական և ակնառու-պատկերավոր մտածողությունը, երևակայությունը և հիշողությունը:

Նախադպրոցական տարիքում երեխան արդեն տիրապետում է խոսքին, որի միջոցով նա արտահայտում է իր բոլոր տպավորությունները, պատմում է իր համար կարևոր իրադարձությունները: Խոսքը որպես հաղորդակցման միջոց, իր մեջ կրում է ոչ միայն տեղեկատվության փոխանցման գործառույթը, այլև այլև խոսքը ուղեկցում է միմիկայով, դիրքով և ժեստերով: Ընդօրինակելով ծնողներին և շրջապատող մարդկանց երեխան անգիտակցորեն ընկալում է հաղորդակցամն ոճը, որը դառնում է նրա էությունը:

Երեխայի անձնային զարգացման աղբյուրը համարվում է հասարակական փորձը, որը հաղորդակցման գործընթացում փոխանցվում է մեծահասակին վարքի էտալոնների, օրինակների ձևով: Յուրացվող փորձի բովանդակությունը և նրա ընդհանրացվածության աստիճանը կախված է նրա հաղորդակցման ձևից: Հաղորդակցումը դիտելով որպես սոցիալական փորձի փոխանցում, սովետական հոգեբանները հիմնականում ուսումնասիրել են երեխայի հաղորդակցումը մեծահասակի հետ[2]:

Երեխան սկսած 3 տարեկանից հայտնաբերում է, որ նա չի համարվում ընտանիքի կենտրոնը. հատկապես նա «ցնցվում է» այն բանից, որ մայրիկը սիրում է հայրիկին, իսկ հայրիկը՝ մայրիկին: Մինչ այդ նա անգիտակցորեն զգում էր, որ ինքը ուշադրության կենտրոնում է, իսկ հիմա տեսնում է, որ ծնողները շփվում են նաև առանց իր ներկայության: Հիասթափված նա սկսում է ագրեսիա դրսևորել, նրան թվում է, թե ծնողները իրեն «խաբել են»: Իրականում նա դառնում է ավելի ինքնուրույն, նրան դուր է գալիս այդ ինքնուրույնությունը, սակայն նրա դուրը չի գալիս, որ մայրիկը միայն իրեն չի պատկանում: Փոխվում են շփման ձևերը. միմյանց հետ շփման հարաբերությունները սկսում են զարգանալ եռանկյան ձևով՝ մայր-երեխա-հայր: Նման հարաբերությունները երեխային դուր չի գալիս: Եվ այստեղ ի հայտ են գալիս այլ կողմեր՝ երեխան մեկ գերադասում է հայրիկին, մեկ՝ մայրիկին: Վերջապես շփման այդ

[2] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005,էջ 138

խանդային ձևերը անցնում են և հանգստացած երեխան վերականգնում է հավասարակշռությունը, նա սիրում է և հայրիկին, և մայրիկին[3]:

Նախադպրոցական տարիքում երեխայի հետաքրքրություններն առարկաների աշխարհից տեղափոխվում են մեծահասակների աշխարհ: Երեխան առաջին անգամ դուրս է գալիս ընտանիքի, շրջապատող մտերիմ մարդկանց սահմաններից: Մեծահասակը սկսում է հանդես գալ ոչ միայն որպես կոնկրետ անձ, այլև որպես կերպար: Նախադպրոցական տարիքի զարգացման սոցիալական իրադրությունը դա «երեխա-մեծահասակ» փոխհարաբերություններն են: Ընդհանրացված մեծահասակը դա հասարակական գործառույթների կրողն է: Վաղ տարիքի վերջում երեխայի մոտ ձևավորվում է «ես ինքս» ֆենոմենը: Արտաքնապես դա երեխայի «ուզում եմ»-ի և մեծահասակի «չի կարելի»-ի հակադրությունն է: Երեխան ձգտում է գործել ինքնուրույն, իրեն պահի «մեծահասակի պես»: Այդ հակադրությունը լուծվում է նախադպրոցականի գործունեության հատուկ տեսակում՝ խաղում: Խաղային գործունեությունն ազատ է գործողությունների պարտադրողական միջոցներից, այն կրում է սիմվոլիկ բնույթ: Սյուժետա-դերային խաղում երեխան իր վրա է վերցնում դերը և մոդելացնում է նրա գործողությունները, խաղում է այդ երևակայական իրադրությունը[4]:

Մեծահասակի հետ փոխներգործությունը առարկայականից պլանից անցնում է հարաբերություններին: Հարաբերությունների մոդելը դառնում է սյուժետա-դերային խաղը՝ երեխայի առաջատար գործունությունը: Զարգանում են հաղորդակցման նոր ձևեր և գործունեության հիմնական ձևեր՝ խաղ, ուսուցում, աշխատանք և դրանցից յուրաքանչյուրը իր ներդրումն է ունենում նախադպրոցականի անձի ձևավորման մեջ: Մտերմիկ-հուզական և իրադրային-գործնական հաղորդակցումը, որը ձևավորվել է վաղ տարիքում, դեռևս կարևոր են երեխայի համար, նրան դրանք ուրախացնում են:

Գենետիկորեն հաղորդակցման վաղ ձևը համարվում է ընդօրինակումը: Այն նաև փոփոխվում է նախադպրոցական տարիքում: Երեխաները ընդօրինակում են տեսքի արտաքին գծերը և վարքը՝ տոնայնությունը, արտահայտությունները, խստությունը, հոգատարությունը: Մեծահասակների մոտ դրսևրվում են իդեալական պատկերներ՝ որպես ընդօրինակման պատկերներ: Երեխան ընդօրինակելով ընդունում է դերը և

---

[3] Мухина В.С. “Возрастная психология”М., 2006,, էջ 221

[4] Шаповаленко И.В. “Возрастная психология”М., 2005,էջ201

փոխանցում է վարքը ընդհանրացված: Սակայն սկսում են դրսևորվել նոր հաղորդակցման ձևեր: Խոսքի զարգացման հետ միասին հաղորդակցումը դառնում է տեղեկատվական, ճանաչողական: Միայն քնքշանքը բավական չէ. նրանք սկսում են հարցեր տալ, խնդրում են հեքիաթ պատմել: Բացի այդ, տեղեկատվական հաղորդակցման մեջ զարգանում է ճանաչողական հետաքրքրություն, որը կապվում է գիտելիքների հետ, որի հիման վրա կառուցվում է հետագա ուսուցումը: Դրսևորվում է ևս մի ձև՝ անձնային հաղորդակցումը, որը սկզբում իրադրային է, իսկ հետո՝ ոչ իրադրային, երբ գնահատվում են անձի որակները:

Նախադպրոցական տարիքում ևս մեկ կարևոր զարգացման գործոն համարվում է **հասակակիցների հետ հաղորդակցումը**, որը տարեցտարի դառնում է ավելի երկարատև և բովանդակալից: Սկզբում դա համատեղ գործունեությունն է առարկաների հետ՝ ըստ «կողքին, բայց ոչ միասին» սկզբունքի համաձայն: Հետո զարգանում են համագործակցության ձևերը՝ համատեղ կամ հերթով իրականացնում են մի գործողություն, հսկում են ընկերոջ գործողությունները, ուղղում նրա սխալները, օգնում են նրան, ընդունում ընկերոջ դիտողությունները, համաձայնեցնում են իրենց մտքերը:

Թեպետ վերջին տասնամյակներին նկատվում է ահռելի ազդեցությունը երեխայի անձնային զարգացման վրա հասակակիցների հետ հաղորդակցումը: Ա.Ա.Ռոյակը ուսումնասիրել է մանկական կոնֆլիկտները, Յա.Լ.Կոլոմինսկին և նրա գործընկերները՝ մանկական խմբի կառուցվածքը, երեխաների դիրքային դերերը: Բիհևորիստական ուղղության կողմնակիցները ուսումնասիրել են 4-5 տարեկան հաղորդակցման մինչև 50 ցուցանիշ հասակակիցների հետ: Պարզվել է, որ երեխաները դրսում ավելի շատ են շփվում իրենց հասակակիցների հետ, իսկ ներսում մեծահասակների հետ[5]:

Ե.Օ.Սմիրնովան իր «Երեխայի զարգացում» աշխատանքում նշում է, որ հասակակիցների հետ հաղորդակցումը տարբերվում է իր գործառույթներով և խնդիրներով: Մեծահասակը մշտապես հանդես է գալիս որպես նոր տեղեկատվության և գնահատականի աղբյուր, իսկ հասակակիցը երեխայի համար համարվում է ղեկավարման, հսկողության, գնահատականի, իր հետ համեմատվելու, խաղում

[5] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ 139

ընկերոջ և այլնի համար օբյեկտ: Շփվելով հասակակցի հետ՝ երեխան վիճում է իր հետ, պահանջում է, հանգստացնում, խաբում և այլն: Նրանց հաղորդակցական գործողությունները ավելի բազմազան են[6]:

Երեխաների շփումները հուզականորեն ավելի լեցուն են՝ ծայրաստիճան ուրախությունից մինչև վեճ. դրանք անկայուն են: Հասակակիցների միջավայրը յուրաքանչյուրին օգնում է արտահայտել իր յուրօրինակությունն ու ինքնաբխությունը: Այստեղ երեխայի մոտ նկատելի են նախաձեռնողական գործողությունները, իսկ մեծահասակի հետ՝ պատասխանողական. երեխան ընդունում և պաշտպանում է մեծահասակի նախաձեռնությունը:

Հասակակիցների հետ շփումը դինամիկ գործընթաց է: Ի հայտ գալով վաղ տարիքում՝ հասակակցի նկատմամբ պահանջը սրվում է 4 տարեկանում: Մինչ այդ երեխաները խաղում են իրար կողք, բայց ոչ միասին: Հասակակիցներն անհրաժեշտ են եղել, որ տեղեկացնեն իրենց խաղի մասին, պարծենան: Երեխան իր ընկերոջից մասնակցություն և ինքնահարգանք է ակնկալում: Սկսած 4 տարեկանից երեխան անցնում է սյուժետա-դերային խաղ, որն առանց ընկերների անհնարին է: Խաղում գործընկերը դա հիմնական սյուժեն է, և երեխաները ձգտում են դեպի հասակակիցները: Խաղում նրանք բաժանվում են հարաբերությունների երկու խմբի՝ սյուժետային և իրական: Անցնելով մի խմբից մյուսին՝ նրանք փոխում են տոնայնությունը և խոսքը: Դա արդեն ոչ թե ուղղակի մասնակցություն է, այլ գործնական համագործակցություն: Առաջանում է մրցակցություն. երեխան իր ընկորոջից ակնկալում է իր հաջողությունների ճանաչում և անհաջողությունները թաքցնում է:

6-7 տարեկանում փոխհարաբերությունները նորից փոխվում են. առաջանում է հետաքրքրություն ընկերոջ նկատմամբ որպես անձ, ծնվում է ընկերությունը: Եվ հիմա կարևորը ոչ թե խաղն է, այլ ընկերությունը, ընկերոջ ներկայությունը, համատեղ խոսակցությունը, նոր տեղեկությունները և խաղալիքը նրա հետ կիսելու ունակությունը: Հասակակիցը հիմա երեխայի համար դառնում է ինքնարժեք անձ, և ոչ թե միայն իր հոտ համեմատվելու առարկա:

---

[6] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ 139

Իրեն հավասար երեխայի հետ առաջին փոխհարաբերությունների փորձը համարվում է անձի հետագա կառուցման հիմքը:

Հաղորդակցման մեջ զարգանում է երեխայի **ինքնագնահատականը և ինքնագիտակցությունը**[7]: Դա կապված է մեծահասակի կողմից նրա վարքի գնահատականի հետ, խրախուսանքների, հարաբերությունների փոփոխման հետ: Երեխայի նկատմամբ հասակակաիցների վերաբերմունքը կախված է իր մեծահասակի գնահատականից: Փոքր երեխաներն իրենց հիմնականում գնահատում են դրականորեն, նույնիսկ այն որակների համար, որոնց իմաստը նրանք չեն հասկանում: Ավագ նախադպրոցականները սկսում են արտահայտել ընկերների մասին սեփական դատողությունները ըստ համատեղ ունեցած խաղի փորձի: Նրանք գիտակցում են իրենց արժանիքներն ու թերությունները՝ ըստ ընտանիքում և մանկապարտեզում հասակակիցների արարքների մասին արված դիտողությունների հիման վրա:

Իրեն այլ երեխաների հետ համեմատելու ունակությունը ձևավորվում է միայն նախադպրոցական տարիքի վերջում: Դրա հետ մեկտեղ նա պետք է կարողանա օգտագործել այդ փոխհարաբերությունները և ցուցադրի իր այն հատկանիշները, որոնք բնորոշ են 7 տարեկանի ճգնաժամին: Ինքնագիտակցությունն ու ինքնագնահատականը հետագա անձնային զարգացման հիմքն է:

Հասակակիցների հետ շփումն ազդում է էականորեն երեխայի անձի զարգացման վրա: Կախված հաղորդակցամն ոճից, հասակակիցների շրջանում նրա զբաղեցրած դիրքից՝ երեխան իրեն ավելի հանգիստ, բավարարված է զգում, թե ինչ չափով է նա յուրացնում հասակակիցների հետ հարաբերությունների նորմերը: Շփման մեջ երեխան շատ արագ է կողմնորոշվում. նրա մոտ ի հայտ են գալիս ընդունելի և վանելի հասակակիցներ: Նրանց հետ շփումը հաղորդակցման դաժան «դպրոց» է[8]:

Հենց հասակակիցների հետ շփումն էլ պահանջում է բարձր հուզական լարվածություն: «Հաղորդակցման ուրախության համար» երեխան ծախսում է մեծ էներգիա զգացմունքների վրա՝ կապված նույնականացման հաջողության և օտարման տխրության հետ: Հասակակիցների հետ շփումը ոչ միայն լավ հնարավորություն է միասին շրջապատող աշխարհը ճանաչելու համար, այլև իր հասակի երեխաների հետ

[7] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ 141
[8] Мухина В.С. “Возрастная психология”М., 2006, էջ 232

հաղորդակցման, աղջիկների և տղաների հետ շփվելու հնարավորություն: Նախադպրոցական տարիքի երեխաներն ակտիվորեն հետաքրքրվում են միմյանցով, նրանց մոտ ի հայտ է գալիս հասակակիցների հետ շփվելու պահանջմունք[9]:

Նախադպրոցական դաստիարակության պայմաններում երեխան անընդհատ գտնվելով իր տարիքի երեխաների հետ նա ձեռք է բերում վարքի առաջին ձեռքբերումները՝ շփմամբ իրեն հավասար մասնակիցների շրջանում: Երեխայի զարգացման վրա ազդում են հասակակիցների խումբը: Հենց հասակակիցների հետ շփման պայմաններում երեխան մշտապես բախվում է գործնականում յուրացված վարքի նորմերը կիրառման անհրաժեշտության հետ: Նախադպրոցական տարիքում մեծահասակը սկսում է գիտակցորեն կամ անգիտակցորեն երեխային ուսուցանել սեռային դերը համընդհանուր ընդունված ստերեոտիպերի համաձայն՝ նրան կողմնորոշելով, թե ինչ է նշանակում լինել աղջիկ կամ տղա: Տղաներին ավելի շատ են թույլատրվում դրսևորել ագրեսիվությունը, խրախուսում են ֆիզիկական ակտիվությունը, նախաձեռնողականությունը: Իսկ աղջիկներից ավելի շատ ակնկալում են զգացմունքայնություն, հուզականություն, քնքշանք:

1. 2. **Նախադպրոցական տարիքի երեխաների հաղորդակցման կարողությունների ձևավորումը**

Երեխայի անձի ձևավորման և զարգացման մեջ խիստ կարևոր նշանակություն ունեն խոսքի և հաղորդակցության զարգացումը: Հայտնի է, որ երեխայի մտածողությունն արմատական փոփոխությունների է ենթարկվում, երբ նա ունակ է դառնում լեզվական հաղորդակցության և ուսուցումը նրան սովորեցնում է տիրապետել սեփական մտքերին (Լ.Ս.Վիգոտսկի):

Երեխայի խոսքի զարգացումը, լեզվական հաղորդակցումն ու փոխազդեցությունն իր անմիջական միջավայրի, շրջապատի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ գործունեությունը նրա զարգացման ամենակարևոր գրավականներն են:

[9] Мухина В.С. “Возрастная психология”М., 2006, էջ 228

Հասարակության մեջ իր տեղը գտնելու համար մարդը պետք է արդյունավետ հաղորդակցվել սովորի: Երեխան նախ շփվում է ծնողների հետ, այնուհետև նաև այլ մարդկանց, սովորում է հաղորդակցվել համատեղ գործունեության ընթացքում: Այդ գործունեությունը կարող է լինել խաղ, ուսում, իր ուժերի չափով աշխատանք: Այդ ընթացքում երեխան յուրացնում է իր միջավայրի սոցիալական փորձը, հասկանում է, թե ինչը ինչպես է արվում, սովորում է վարքի ու գործունեության նորմերն ու կանոնները, այսինքն՝ հասկանում է, թե ինչ կարելի է անել, իսկ ինչ՝ ոչ, ում հետ ինչպես կարելի է վարվել, որտեղ իրեն ինչպես պիտի պահի և այլն: Իր շրջապատի սոցիալական նորմերի յուրացման այս գործընթացն էլ հենց **սոցիալականացումն է:** Երեխայի վաղ սոցիալականացման ամենակարևոր կողմերից մեկը նրա հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումն է:

Երեխայի խոսքի ձևավորման գործընթացը կառուցվում է ոչ միայն ընդհանուր դիդակտիկական, այլև որոշակի մեթոդական սկզբունքների հիման վրա, որոնցով ղեկավարվելիս դաստիարակն ընտրում է համապատասխան մեթոդները, հնարքներն ու միջոցները: Այդ սկզբունքները ելնում են երեխայի լեզվի և խոսքի յուրացման օրինաչափություններից և արտացոլում են մայրենի լեզվի ուսուցման առանձնահատկությունները, լրացնում դիդակտիկական սկզբունքները:

Մանագետներն առաջարկում են մայրենի լեզվի ուսուցման հետևյալ սկզբունքները.

1.Երեխայի զգայական, մտավոր և խոսքի զարգացման փոխկապակցվածության սկզբունք.

Այն հիմնվում է խոսքի, որպես լեզվամտածողական գործունեության վրա, որի զարգացումը սերտ կապված է շրջապատող աշխարհի ընկալման հետ: Խոսքը հիմնվում է մտածողության հիմք հանդիսացող զգայական պատկերացումների վրա և զարգանում մտածողության հետ համատեղ: Հարստացնելով երեխայի գիտակցությունը շրջապատող աշխարհի հասկացություններով, մենք զարգացնում ենք նաև նրա խոսքը: Այստեղ պետք է հաշվի առնել նաև մտածողության առանձնահատկությունները, այսինքն՝ զարգացումը պետք է ընթանա կոնկրետ մտածողությունից դեպի վերացականը, պարզից դեպի բարդը:

2. Հաղորդակցական գործունեության սկզբունքը

Խոսքային գործունեության ընթացքում լեզուն հաղորդակման միջոց է: Այս սկզբունքը ենթադրում է, որ երեխայի խոսքի զարգացումը՝ որպես հաղորդակցման միջոց ամենից արդյունավետ տեղի է ունենում **գործունեության ընթացքում:** Դա նշանակում է նաև, որ երեխայի գործունեությունն այնպես պետք է կազմակերպել, որ այն նպաստի նրա խոսքային հաղորդակցման կարողությունների զարգացմանը:

3.Լեզվազգայունակության զարգացման սկզբունք

Լեզվազգայունակությունը լեզվի օրինաչափությունների չգիտակցված, ենթագիտակացական տիրապետումն է: Խոսքի համակողմանի ընկալման գործընթացում երեխայի մեջ ենթագիտակցական մակարդակում ձևավորվում են զուգադրություններ (անալոգիաներ), որոնց շնորհիվ նա յուրացնում է նաև խոսքի օրինաչափությունները: Երեխաներն սկսում են ավելի ազատ օգտվել լեզվի ձևերից, տարրերից, նրանց մեջ ծնվում են բառերը, բառակապակցությունները մտապահելու և խոսքային հաղորդակցման տարբեր իրադրություններում օգտագործելու կարողություն:

4.Լեզվական երևույթների տարրական ձևավորման սկզբունք

Երեխայի խոսքի զարգացման հիմքում ընկած է ոչ միայն մեծերին ընդօրինակելը, այլ նաև լեզվական երևույթների գիտակցական ընկալումը: Երեխայի մեջ ձևավորվում է ճիշտ խոսքային վարքագծի ներքին համակարգ, որը թույլ է տալիս նրան ոչ միայն կրկնել, այլև գիտակցել խոսքային արտահայտությունները: Լեզվի ուսուցման հիմքում ընկած է խոսքային ընդհանրացումների և ստեղծագործական ունակությունների ձևավորումը: Միայն մեխանիկական կրկնությունները բավարար չեն լեզուն յուրացնելու համար: Լեոնտևն առանձնացնում է խոսքի գիտակցման ընկալման հետևյալ ձևերը.

1. ազատ խոսք,
2. խոսքի մասերի գիտակցում,
3. Սեփական խոսքի գիտակցում:

5.Խոսքի տարբեր կողմերի համակցման սկզբունք

Այս սկզբունքն իրականացվում է լեզվի բոլոր մակարդակների յուրացման և դրանց սերտ փոխկապակցման միջոցով: Խոսքի տարբեր խնդիրների յուրացումը լեզվի համակարգի տիրապետման գործընթաց է: Խոսքի յուրաքանչյուր խնդրի ուղղությամբ տարվող աշխատանքն ինքնանպատակ չէ, այլ ուղղված է նաև խոսքի մյուս կողմերի ձևավորմանը:

6. Խոսքային գործունեության դրդապատճառների հարստացման սկզբունք

Խոսքային գործունեության ընթացքում կարևորագույն դեր է խաղում դրդապատճառը: Երեխայի համար խոսելը, խոսքային գործունեությունը պետք է պատճառաբանված ու անհրաժեշտ լինի: Այդ պատճառով էլ մեծ նշանակություն ունի երեխայի խոսքային գործունեության դրդապատճառների հարստացումը:

Սա ենթադրում է, որ երեխայի խոսքը զարգանում է նրա ամենօրյա հաղորդակցման ընթացքում, այսինքն՝ երեխայի համար խոսելու, հաղորդակցվելու բնական և իրական դրդապատճառները պետք է լինեն շփվելու, իմանալու, տպավորությունները կիսելու, իր այս կամ այն կարիքը հոգալու բնական պահանջմունքներները:

Ուստի երեխայի հետ շփումը, ինչպես նաև պարապմունքները պետք է կառուցվեն բնական հաղորդակցման վրա, քանի որ բնական հաղորդակցման ընթացքում հաշվի է առնվում երեխայի ցանկությունը, հետաքրքրությունները, ինչը խոսքային գործունեության բնական դրդապատճառներ է ծնում և բարձրացնում արդյունավետությունը:

Դաստիարակի խնդիրն է ստեղծել այնպիսի իրավիճակներ, երբ երեխան հաղորդակցվելու պահանջ ունենա, և ուսուցման յուրաքանչյուր գործողություն պարունակի դրական մոտիվ:

6. Ակտիվ խոսքային կիրառում ապահովող սկզբունք

Այս սկզբունքի էությունն այն է, որ լեզուն յուրացվում է կիրառման ընթացքում, խոսքային պրակտիկայում: Այլ կերպ ասած՝ «Խոսել սովորում են խոսելովե: Խոսքի ակտիվությունը երեխայի խոսքի զարգացման կարևոր պայմաններից է: Խոսքի ակտիվությունը ոչ միայն խոսելն է, սեփական մտքերն արտահայտելը, այլ նաև լսելն ու ընկալելը: Պարապմունքի ընթացքում անհրաժեշտ է կիրառել երեխայի խոսքի ակտիվացման տարբեր գործոններ. հուզական դրական մթնոլորտ, հաղորդակցում, դիդակտիկ խաղային հնարների կիրառում, հանձնարարություններ և այլն:

1.3. **Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների հաղորդակցական կարողությունների զարգացումը խաղի միջոցով**

Խաղը գործունեության մի այնպիսի հարուստ տեսակ է, որի մեջ զարգանում են երեխայի և ֆիզիկական, և զգայական, և մտավոր, և ստեղծագործական կարողությունները: Այստեղ կարևոր նշանակություն ունի նախադպրոցական կրթության բովանդակությունը, որը պայմանավորված է նախադպրոցական տարիքային բոլոր փուլերի՝ վաղ մանկության, կրտսեր և ավագ նախադպրոցական տարիքի զարգացման շրջանի տարիքային փուլերով ու երեխաների անհատական զարգացման առանձնահատկություններով:

Երեխայի զարգացմանը զուգընթաց դերային խաղին փոխարինում է կանոններով խաղը, ձևավորվում է ինքնագնահատականը, հավակնությունների մակարդակը, կամքը, վարքի խթանները, երեխան սովորում է սահմանափակել իր ցանկությունները, հաշվի առնել արգելքները, նորմերը պահանջները[10]:

Մանկապարտեզում երեխաների սիրած զբաղմունքներից են խաղ-զվարճալիքները, որոնք ապահովում են արդյունավետ, ուրախ հաղորդակցություն, զարգացնում ուշադրությունը ևանկաշկանդ գործելու կարողությունը: Խաղային իրավիճակներում երեխան «դրության տերն»է, նրա խոսքն ու գործողություններն ավելի ազատ են, անկաշկանդ, միտքն առավել ճկուն: Երեխաներն իրենք են որոշում խաղի կանոնները,ենթարկվում իրենց որոշած պայմաններին և անհրաժեշտության դեպքում փոխում դրանք: Նրանք վարժվում են ապրել հասարակական կյանքով[11]:

Խաղային իրավիճակում անկախ, ազատ գործող երեխան լիարժեքորեն օգտագործում է իր բոլոր հմտությունները, ունեցած տեղեկատվությունը: Միաժամանակ դրանք փոխանցում է ընկերներին և յուրացնում նրանցը: Այդ ընթացքում նա կենցաղային, սոցիալական և հոգեբանական խնդիրներ է լուծում:

---

10 Маркова Т. А., Актуальные проблемы педагогики игры, Сб. науч. трудов, Москва, 1990г.էջ 48

11 Սմբատյան Լ., Խաղային իրավիճակների օգտագործումը նախադպրոցական մանկավարժության մեջ, 'Նախաշավիղ' գիտամեթոդական հանդես, 5. 2010

Երեխաներին շատ է ոգևորում խաղային իրավիճակների ստեղծումը, որը նրանց ինքնակազմակերպման, ինքնարտահայտման և անհատականության դրսևորման հնարավորություն է տալիս: Երեխան դառնում է նախաձեռնող և սոցիալապես ակտիվ:

Խաղային իրավիճակների վերարտադրումը կատարվում է հատկապես դերային խաղի միջոցով՝ երեխային լավ ծանոթ հարաբերություններով: Այդ խաղերը սովորաբար մեծերի կյանքի մանկական մեկնաբանություններ են, որոնցում դրսևորվում է փոքրերի վերաբերմունքը մեծերի նկատմամբ: Այդ ընթացքում երեխան գնահատում ու յուրացնում է հասարակության մեջ ընդունված սոցիալական դերերն ու հարաբերությունները և վերարտադրում դրանք: Առաջին հայացքից թվում է, թե նա ընդամենը պասիվ ընդօրինակող է: Իրականում նա այլ կերպ է մեկնաբանում իրավիճակն ու հարաբերությունները, նոր տարրեր ներմուծում սովորական առօրյան վերարտադրող իրավիճակի մեջ, նոր երանգ հաղորդում՝ ելնելով իր կենսափորձից ու աշխարհընկալումից: Նրա համար այդ խաղը ոչ թե սոսկ նմանակում, այլ կյանքի պահ է. այդպահին նա այդ կյանքով է ապրում:

Երեխաների առջև բացելով կյանքի այս կամ այն իրավիճակը և իրադարձությունը՝ դաստիարակը նրանց մղում է անկեղծ զրույցի, որպեսզի կապ հաստատի քննարկվող խնդիրների և իրենց անձնական փորձի միջև, արթնացնի համապատասխան զգացմունք և ճիշտ գնահատական տալու ցանկություն: Խաղային իրավիճակների կիրառման դեպքում մանկավարժը խուսափում է բարոյախոսությունից, խմբում իրավիճակների ուղղակի վերլուծությունից, կոնկրետ անուններ և արարքներ նշելուց: Նրա խնդիրն է՝ արթնացնել հուզական ապրումներըև օգնել երեխաներին՝ կատարելու ինքնուրույն անհրաժեշտ եզրահանգումներ[12]:

Երեխաների կողմից վերապրված հույզերն իրական խաղային և պայմանական իրավիճակներում, որոնք առաջանում են դաստիարակի նախաձեռնությամբ կամ տարերայնորեն, հարստացնում են նախադպրոցականների

---

12 Սմբատյան Լ., Խաղային իրավիճակների օգտագործումը նախադպրոցական մանկավարժության մեջ, 'Նախաշավիղ' գիտամեթոդական հանդես, 5. 2010

հուզաշխարհը, բացում նոր հնարավորություններ՝ ինքնարտահայտման և համագործակցության համար:

Նախադպրոցականի կապը շրջապատի հետ հաջողությամբ ձևավորվում է հուզական «գրագիտության» պայմաններում: Այսինքն՝ երեխան պետք է կարողանա ոչ միայն գրագետ արտահայտել սեփական հույզերը, այլև ճիշտ հասկանալ ու գնահատել ուրիշներինը: Հաճախ նա անտարբերություն է ցուցաբերում մարդկանց նկատմամբ այն պատճառով, որ չի կարող հասկանալ նրանց իրավիճակը, տրամադրությունը, «կարդալ» հույզերը՝ արտահայտված միմիկաների, ժեստերի, ինտոնացիաների մեջ: Այդ պատճառով հատուկ ուշադրություն պետք է դարձվի ուրիշների հուզական իրավիճակը հասկանալու, իրական կյանքում և արվեստի բնագավառում հուզական իրադարձությունները տարբերելու, սեփական զգացմունքները գիտակցելու և կարգավորելու կարողության զարգացմանը: Երեխաների մեջ ձևավորվում է մարդու հուզական իրավիճակը հասկանալու կարողություն՝ արտահայտված բնանկարի, երաժշտության, կերպարվեստի, թատրոնի, կինոյի և նկարների միջոցով: Միաժամանակ ձևավորվում է մարդու հուզական աշխարհի և արվեստում դրա համապատասխան տրամադրության համադրման կարողություն: Դեռևս փոքրերի խմբերում երեխային կարելի է ներգրավել նախաձեռնողական խաղերում: Երեխաներն ընդօրինակում են տարբեր կենդանիների գործողությունները, ինչպես նաև վերարտադրում նրանց և իրենց ձագերի կերպարները: Դաստիարակի օրինակով՝ շարժումների և միմիկայի միջոցով վերարտադրում են կենդանիների տրամադրությունները (բարի-չար, ուրախ-տխուր, ագրեսիվ-հանգիստ) և նրանց կերպարները: Օրինակ՝ փոքրիկ, արագաշարժ մկնիկ, մեծ, ծանրաշարժ արջ, նուրբ, նազելի փիսիկ, գազազած շուն, մեծ, բարի հավ, փոքրիկ, շարժուն, ուրախ ճուտիկներ[13]:

Եթե կրտսեր նախադպրոցական տարիքի երեխան ընդունակ է տարբերել վառ արտահայտված հակասական և հուզական իրավիճակները (ծիծաղ-արցունքներ), ապա ավելի մեծ տարիքում երեխաները տարբերակում են հուզականության արտահայտման առավել ընդլայնված շրջանակներ, գտնում

---

13 Սմբատյան Լ., Խաղային իրավիճակների օգտագործումը նախադպրոցական մանկավարժության մեջ, 'Նախաշավիղ' գիտամեթոդական հանդես, 5. 2010

դրանց նմանությունները և տարբերությունները, հիմնավորում տարբեր տրամադրությունների պատճառները: Նրանք ուշադրություն են դարձնում հուզական իրավիճակների արտահայտման առանձնահատկություններին՝ հոնքերի դրվածք, աչքերի արտահայտություն, ժեստեր, դիրքեր, ինտոնացիաներ: Աստիճանաբար երեխաները ձեռք են բերում հուզական իրավիճակներին ճիշտ արձագանքելու ունակություններ: Դրանք կապված են հարազատ կամ մոտ մարդկանց տրամադրության և զգացմունքների հետ: Այս ամենը մեզ համոզում է Ա. Վ. Զապորոժեցի պնդման ճշմարտացիությունը. «Երեխայի եսասիրությունը տարիքային անխուսափելի առանձնահատկություն չէ, այլ նրա դաստիարակության թերությունների և սոցիալ-բարոյական փորձի սահմանափակության արդյունքը»:

Անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում դերային խաղը: Հատկապես ավագ նախադպրոցական տարիքում երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում: Դիմացկունություն ցավի նկատմամբ, արժանապատվության, պատասխանատվության, վստահության և արդարության զգացում: Իր կյանքի ոչ մի փուլում երեխան չի սովորի այդքան շատ և արդյունավետ, քան իր մանկական խաղերի ընթացքում: Այդ իսկ պատճառով խաղային գործունեությունը հարկավոր է տեղափոխել դպրոցական ուսուցման շրջան, այդ դեպքում երեխայի ներքին հնարավորությունները ավելի ազատ են զարգանում:

ԳԼՈՒԽ 2.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Ստորև ներկայացնում եմ հաղորդակցական ունակությունների զարգացմանն ուղղված իմ կողմից կազմակերպված խաղերը:

Խաղ «Ապագա»: Խաղ, որտեղ խաղարկվում են սպասվող երևույթներ: Բոլոր մայրերը գիտեն, թե ինչպիսի սթրես են ապրում երեխաներն այն մտքից, որ պետք է այցելեն բժիշկի: Երեխան իր երևակայության մեջ պատկերացնում է ցավալի պրոցեդուրաների հետ կապված իրավիճակներ՝ անկախ գործի իրական վիճակից: (Օրինակ «դուք» պետք է այցելեք սովորական մանկաբուժի): Եթե ձեր երեխան շատ է անհանգստանում, առաջարկեք նրան խաղալ «այցը բժիշկի մոտ» թող նա ինքը ընտրի իր դերը, բժիշկի կամ այցելուի: Խաղարկեք ամբողջ իրավիճակը հերթականությամբ: «Դուք» պատրաստվում եք պոլիկլինիկա գնալ, եկաք բժիշկի մոտ, խաղարկեք բոլոր ստուգումները, նշանակեք պրոցեդուրաներ, դուրս գրեք բաղադրատոմս, գնացեք դեղատուն, անցկացրեք բուժում: Պետք է փորձել խաղարկել տարբեր սցենարներ և տեսնել արդյունքը: Երեխաները խաղում դուրս են հանում իրենց հուզմունքը և օբյեկտիվորեն դառնում են հանգիստ: Չի բացառվում, որ նման խաղից հետո երեխան կցանկանա այցելել բժիշկին նրա համար, որպեսզի բավարարի իր հետաքրքրությունը, թե արդյոք իրականում այդպես է ինչպես խաղում:

Սակայն խաղարկային իրավիճակները կարող են նաև քիչ կապ ունենալ կամ ընդհանրապես կապ չունենալ առօրյայի, կենցաղի հետ: Դրանց ստեղծողը երեխայի երևակայությունն է: Այս դեպքում նրա մտածողությունն ավելի ազատ ու անկաշկանդ է: Նման խաղեր կազմակերպում է նաև դաստիարակը և ինքն էլ խաղում երեխաների հետ: Դրանք կարող են հստակ խնդիրներով փոքրիկ խաղ-ներկայացումներ լինել: Ներկայացնենք երեխայի հաղորդակցական հմտությունները զարգացնող խաղերի տեսակներ.

Խաղային գործունեություն՝ անմիջական օգնության ձևով

Օգնենք մեր խաղալիքներին

Դաստիարակն ստեղծում է այնպիսի իրավիճակ, որտեղ երեխաներից պահանջվում է ակտիվ կերպով ցուցաբերել օգնություն, հոգատարություն և

խղճահարություն: Օրինակ, օգնել հիվանդ տիկնիկին, կերակրել սոված շնիկին, ոզնու համար տնակ պատրաստել, կապիկի համար տաք հագուստներ ընտրել և այլն:

Հաջողությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչքանո՞վ է խաղային իրավիճակի բովանդակությունը համընկնում երեխաների կյանքի փորձին և տպավորություններին: Երեխաները մղվում են խնդրի լուծմանը: Նրանք ոչ միայն քննարկում և պատկերացնում են, այլև գործնականորեն իրականացնում անհրաժեշտ գործողությունները:

Գործնական խաղային իրավիճակների ստեղծում՝ նպատակաուղղված շփման և վարքագծի կանոնների յուրացմանը

Այս իրավիճակները կարող են կազմակերպված լինել և՞ որպես բեմականացում, և՞ որպես խաղային ու իրական բովանդակություն ունեցող գործնական իրավիճակներ: Օրինակ՝ «Սովորեցնենք մեր տիկնիկներին բարևել ու հրաժեշտ տալ», «Ցույց տանք Արջուկին, թե ինչպես է պետք ընդունել հյուրերին», «Շնորհավորենք Լիլիթին՝ ծննդյան տոնի առթիվ» և այլն: Դաստիարակչական սովորությունները ձևավորվում են աստիճանաբար: Նպատակային իրավիճակների հաճախակի կազմակերպումը օգնում է երեխաներին ձեռք բերել վարվեցողության անհրաժեշտ փորձ:

Սոցիալ-հուզական որակների զարգացման համար ավելի մեծ կարևորություն ունեն այն իրավիճակները, որոնցում երեխաները լուծում են կոնկրետ կենսական խնդիրներ: Դրանք գործնական օգնության, ուշադրության ակտիվ ցուցաբերման, մեծերի և երեխաների խնամքի իրավիճակներն են: Այսպես՝ «Չարժե տխրել», «Մենք այցելում ենք ընկերոջը՝ հիվանդությունից հետո», «Մենք փոխում ենք խաղալիքները» և այլն:

Դաստիարակը հուզականորեն ներկայացնում է առաջացած խնդիրը («Սամվելը հիվանդությունից հետո վերադառնում է մանկապարտեզ, ինչպե՞ս կարող ենք ուրախացնել նրան») և փորձում ներգրավել երեխաներին դրա լուծման որոնումների մեջ: Եթե նրանք դժվարանում են, կարելի է հուշել կամ ցույց տալ խնդրի լուծման ճիշտ եղանակը և առաջարկել ինքնուրույն իրականացնել այն: Դաստիարակը երեխաներին սովորեցնում է նկատել մյուսների դժվարությունները և

փորձել օգնել: Այդ նպատակով նա ստեղծում է որևէ իրավիճակ. ասենք՝ «Խաղալիքները թափվել են»:

Այսպես՝ սկուտեղի վրա բերում է խաղալիքներ, մատիտներ կամ այլ մանր առարկաներ, որոնք միտումնավոր կերպով թափում է գետնին.

-Ա՜խ, ես սայթաքեցի, և բոլոր խաղալիքները թափվեցին: Ո՞վ կարող է ինձ օգնել:

Մեր դայակն էլ այստեղ չէ, որ ինձ օգնի:

-Սկսում է հավաքել դրանք՝ կրկնելով, -ո՞վ կարող է ինձ օգնել:

Երեխաներն սկսում են հավաքել թափվածը: Դաստիարակը ոգևորում է նրանց.

-Խաղալիքներն ուզում էին փախչել ինձնից, իսկ դուք չթողեցիք: Կարենը բերեց երկու խորանարդիկ, Նինան՝ օղակը, իսկ Նվարդը գտավ սունկը: Այն թաքնվել էր աթոռի տակ, և ես չէի նկատել, բայց նա գտավ ու բերեց: Դուք շատ սուր աչքեր ունեք, ճկուն ձեռքեր: Դուք ինձ արագ օգնեցիք. բոլոր-բոլոր խաղալիքները հավաքեցիք: Շնորհակա՞լ եմ, դուք լա՞վ օգնականներ եք:

Ոչ բոլոր երեխաներն են միանգամից մտնում նման իրավիճակի մեջ: Նրանց (ովքեր հետևում են) դաստիարակը չի շտապեցնում: Երեխաներն ստանում են նոր տպավորություններ, տեսնում են, թե որքա՞ն հետաքրքիր է դաստիարակի հետ աշխատելը,և հաջորդ անգամ փորձում են առանց խնդրելու օգնել նրան:

Դաստիարակը պետք է հաճախակի կազմակերպի նմանատիպ իրավիճակներ. Ամեն անգամ երեխաները յուրովի հասկանում են դրանց դժվարությունները և հաստատակամորեն ներգրավվում օգնության իրականացման մեջ: Այդ կերպ նրանք ձեռք են բերում արժեքավոր գործնական փորձ:

Սովորեցրու ընկերոջդ այն, ինչ ինքդ կարող ես անել...

Դաստիարակը երեխաներին մղում է մեկը մյուսի հանդեպ ուշադրության և հոգատարության, փոխօգնության և համագործակցության: Ծեփել, թղթից պատրաստել մոդելներ, խաղալիքներ,խաղալ սեղանի խաղեր (դոմինո, շաշկի, լոտո), խփել նշանակետին, պտտեցնել օղակ և այլն: Մղելով երեխաներին փորձի փոխանակման՝ դաստիարակն օգնում է նրանց մտնել ուսուցչի դերի մեջ, այսինքն՝

լինել համբերատար, ուշադիր, հասակակիցների սխալների և դժվարությունների հանդեպ լինել ներողամիտ:

Հնարավոր է հավաքական իրավիճակների նպատակային օգտագործում: Դրանք առնչվում են կյանքի կարևոր իրադարձություններին, հարաբերություններին և արարքներին: Դաստիարակը իրավիճակների բովանդակությունը պետք է փնտրի մանկական գրականության մեջ կամ ինքը ստեղծի դրանք: Իրավիճակի հիմք կարող է դառնալ նաև տեսահոլովակը, գրքի նկարազարդումը կամ նկարը:

Մարդասիրական ընտրություն՝ գործնական իրավիճակներում

Նախադպրոցականները կանգնում են ընտրության առջև՝ անդրադառնա՞լ այլ երեխաների խնդիրներին, թե՞ սահմանափակվել սեփական հետաքրքրությունների շրջանակում և անտարբերություն ցուցաբերել: Օրինակ՝ «Նկարը պահել իրե՞ն, թե՞ ներառել ընդհանուր ծանրոցի մեջ՝ հիվանդ ընկերոջը տանելու համար», «Թույլ տա՞լ փոքրիկին խաղալ իր խաղալիքով, թե՞ մնալ անտարբեր նրա խնդրանքի նկատմամբ», «Արձագանքե՞լ օգնության խնդրանքին, թե՞ անտեսել այն»:

Գործնական իրավիճակներում երեխաներին վարքագծի ընտրության հնարավորության ընձեռումն օգնում է ավելի լավ հասկանալ իրենց սոցիալ-բարոյական և հուզական զարգացման առանձնահատկությունները: Ճիշտ կառուցված խաղն ու հմուտ դաստիարակի գործունեությունը նպաստում են երեխաների մոտ խաղային իրավիճակների միջոցով զարգացնել հաղորդակցական հմտությունները, շփվել, դառնալ անկաշկանդ զրուցակից, կարողանալ հստակ ձևակերպել և անկաշկանդ արտահայտել սեփական մտքերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, իրականացնելով թեմայի շուրջ հոգեբանամանկավարժական գրականության վերլուծություն և հետազոտական աշխատանքի արդյունքներից կատարել եմ հետևյալ եզրակացությունը.

Հասակակիցների հետ շփումն էականորեն ազդում է երեխայի անձի զարգացման վրա: Կախված հաղորդակցամն ոճից, հասակակիցների շրջանում նրա զբաղեցրած դիրքից՝ երեխան իրեն ավելի հանգիստ, բավարարված է զգում, թե ինչ չափով է նա յուրացնում հասակակիցների հետ հարաբերությունների նորմերը: Շփման մեջ երեխան շատ արագ է կողմնորոշվում. նրա մոտ ի հայտ են գալիս ընդունելի և վանելի հասակակիցներ: Հենց հասակակիցների հետ շփումն էլ պահանջում է բարձր հուզական լարվածություն: «Հաղորդակցման ուրախության համար» երեխան ծախսում է մեծ էներգիա զգացմունքների վրա՝ կապված նույնականացման հաջողության և օտարման տխրության հետ: Հասակակիցների հետ շփումը ոչ միայն լավ հնարավորություն է միասին շրջապատող աշխարհը ճանաչելու համար, այլև իր հասակի երեխաների հետ հաղորդակցման, աղջիկների և տղաների հետ շփվելու հնարավորություն: Նախադպրոցական տարիքի երեխաներն ակտիվորեն հետաքրքրվում են միմյանցով, նրանց մոտ ի հայտ է գալիս հասակակիցների հետ շփվելու պահանջմունք:

Նախադպրոցական դաստիարակության պայմաններում երեխան անընդհատ գտնվելով իր հասակակիցների միջավայրում ձեռք է բերում վարքի առաջին ձեռքբերումները: Հենց հասակակիցների հետ շփման պայմաններում երեխան մշտապես բախվում է գործնականում յուրացված վարքի նորմերը կիրառման անհրաժեշտության հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սմբատյան Լ., Խաղային իրավիճակների օգտագործումը նախադպրոցական մանկավարժության մեջ, 'Նախաշավիղ' գիտամեթոդական հանդես, 5. 2010
2. Аникеева Н. М., Воспитание игрой, М., "Просвещение'', 1987.
3. Дошкольное воспитание. Москва,2007.
4. Жуковская Р. И., Игра и ее педагогическое значение, Москва, 1975г.
5. Маркова Т. А., Актуальные проблемы педагогики игры, Сб. науч. трудов, Москва, 1990г.
6. Мухина В.С. "Возрастная психология"М., 2006
7. Палагина Н.Н. "Психология развития и возрастная психология"М., 2005
8. Шаповаленко И.В. "Возрастная психология"М., 2005